DOI: 10.59560/18291155-2025.4-100

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ֆրանսիական համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ,
ՀՊՏՀ հասարակագիտության ամբիոնի դոցենտ,
Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ
ORCID ID: 0009-0006-1501-8053

ՏԱՏՅԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի
մագիստրանտ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակը կրոնական բազմակարծության համատեքստում: Վերլուծվում է Եկեղեցու դերի սահմանադրական ամրագրումը, ինչպես նաև «ազգային եկեղեցի» եզրույթի իրավական նշանակությունը:

Միջազգային փորձի և ՄԻԵԴ դատական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա եզրահանգում է արվում առ այն, որ ազգային եկեղեցու ճանաչումը չի հակասում կրոնական ազատությանը, եթե ապահովված են խտրականության բացառման և հավասարության երաշխիքները: Միաժամանակ իրավական որոշակիության տեսանկյունից առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել «ազգային եկեղեցի» եզրույթի սահմանումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում հաճախ են պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Եկեղեցու ներքին գործերին միջամտելու դեպքերը, առաջարկվում է պետության աշխարհիկության սկզբունքը ապահովելու համար իրավական պատասխանատվություն սահմանել պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Եկեղեցու ներքին գործերին միջամտելու համար:

Հիմնաբառեր. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ազգային եկեղեցի, կրոնի ազատություն, բացառիկ առաքելություն, կրոնական բազմակարծություն:

1. Ընդհանուր դրույթներ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակի հստակեցման խնդիրը իրավագիտության արդիական հարցերից է: Սահմանադրական և օրենսդրական կարգավորումներով Եկեղեցին հանդիսանում է որպես ազգային ինքնության ձևավորման և պահպանման առանցքային ինստիտուտ, ինչն էլ, միաժամանակ, կրոնական բազմակարծության սկզբունքի և կրոնական այլ կազմակերպությունների իրավահավասարության ապահովման համատեքստում առաջացնում է իրավաքաղաքական քննարկումներ և իհարկե գիտական վերլուծության պահանջ:

Վերջին տասնամյակների գիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարցը հիմնականում դիտարկվել է պատմաքաղաքական և կրոնագիտական դիտանկյուններից, մինչդեռ իրավական համատեքստում դեռևս առկա են հակասություններ և բացեր: Ընդ որում, միջազգային իրավունքի և մարդու իրավունքների, մասնավորապես խղճի և դավանանքի ազատության ոլորտում տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև գլոբալիզացիոն գործընթացները պահանջում են նոր տեսանկյունից գնահատել Առաքելական Եկեղեցու կարգավիճակը և դրա համադրումը կրոնական բազմակարծության սկզբունքի հետ:

Ժամանակակից հասարակությունում միջդավանական հակասությունների սրացմանը դիմակայելը պահանջում է արդյունավետ քաղաքական և իրավական մեխանիզմների մշակում, որոնք նպատակ ունեն ապահովել տարբեր կրոնական խմբերի ներկայացուցիչների խաղաղ համակեցությունը: Միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը, այդ թվում՝ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող, դառնում են ազգային իրավական համակարգի անբաժանելի մասը և մեծապես որոշում են պետական և իրավական ինստիտուտների հետագա արդիականացման ուղղությունները:

Պատմահիրավական վերլուծությունը վկայում է, որ Հայ առաքելական եկեղեցու սահմանադրական կարգավիճակը ենթարկվել է դինամիկ փոփոխությունների իրեն բնորոշ առանձնահատկություններով: Այսպես՝ 1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված չէր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի վերաբերյալ որևէ նորմ: Նրա դերի ու նշանակության, ինչպես նաև որպես ազգային եկեղեցի ճանաչելու մասին դրույթ ամրագրված էր 01.06.1991 թ. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախաբանում: Իսկ արդեն 2005 թվականի և 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներով ճանաչվեց Հայ առաքելական եկեղեցու, որպես ազգային եկեղեցու կարգավիճակը:

2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների համաձայն՝ 8.1-ին հոդվածով նախատեսվեց, որ եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի

Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք նման ամրագրումը չի հակասում կրոնների և կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքին:

Գ. Հարությունյանը և Ա. Վաղարշյանը ընդգծում են, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցու ազգային կարգավիճակի ընդգծումը որևէ կերպ չի հակասում կրոնների և կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքին օրենքի առջև և չի նսեմացնում մյուս եկեղեցական կառույցների դերն ու նշանակությունը, քանի որ ըստ Սահմանադրության և գործող օրենսդրության՝ բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն հասարակության բարոյահոգեբանական ներուժի պահպանմանն ու զարգացմանը մասնակցելու հավասար հնարավորություններ[1]:

Կիսելով հեղինակների մոտեցումը՝ միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ազգային (պետական) եկեղեցու սահմանադրական ճանաչումը բխում է նաև միջազգային իրավական պրակտիկայից: Այսպես՝ Իսլանդիայի Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Ավետարանական Լյութերական եկեղեցին Իսլանդիայի ազգային եկեղեցին է և որպես այդպիսին պաշտպանվում ու աջակցություն է ստանում պետության կողմից: Նորվեգիայի Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է, որ Նորվեգիայի եկեղեցին՝ Ավետարանական-Լյութերական Եկեղեցին, պետք է մնա Նորվեգիայի պետական եկեղեցի և որպես այդպիսին պետք է աջակցություն ստանա պետության կողմից[2]:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվել են պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունների վերաբերյալ ընդհանուր կարգավորումներ (17-րդ հոդված)՝ երաշխավորելով կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը և կրոնական կազմակերպությունների՝ պետությունից անջատ լինելու սահմանադրական սկզբունքը, ինչպես նաև Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու վերաբերյալ հատուկ դրույթները (18-րդ հոդված), այն է՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

Այսպիսով, 2015 թ. սահմանադրական փոփոխություններով էական փոփոխության ենթարկվեց եկեղեցու և պետության փոխհարաբերությունների

[1] ***Հարությունյան Գ., Վաղարշյան Ա.,*** *ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ: Եր., «Իրավունք», 2010, էջ 123:*

[2] ***Ղամբարյան Ա., Շաքարյան Թ.,*** *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սահմանադրական կարգավիճակի բարեփոխումների դոկտրինալ հայեցակարգ: Երևան 2020, էջ 17:*

ձևակերպումը. եթե նախկինում Սահմանադրությունն օգտագործում էր «եկեղեցին անջատ է պետությունից» ձևակերպումը, ապա նոր սահմանադրական տեքստում այն փոխարինվեց «կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից» ձևակերպմամբ:

Իրավական նորմի վերլուծության տեսանկյունից պրոֆեսոր Գ. Դանիելյանը իրավացիորեն նշում է. «Երբեմն «բացառիկ առաքելություն» եզրույթն անհարկի շփոթի տեղիք է տալիս՝ թողնելով այնպիսի տպավորություն, թե խոսքը իբր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ բացառապես անցյալում ունեցած պատմական առաքելության մասին է: Հեղինակն ընդգծում է, որ Սահմանադրությունը նախ և առաջ իրավական ակտ է, ուստի վերջինիս կոչումը ոչ թե պատմական փաստեր արձանագրելն է, այլ հասարակական հարաբերություններ կարգավորելը: Եվ եթե անգամ Սահմանադրությամբ հղում է արված պատմական փաստերին, ապա դրանք սոսկ արձանագրումներ չեն, այլ իրավական նորմի հիպոթեզի բաղադրիչ են, այսինքն՝ դրանցով ընդգծվում է իրավակարգավորման կոնկրետ տարբերակ ընտրելու օրենսդրի բուն նպատակը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը ոչ միայն պատմական, այլև փաստացի (de facto) բնույթ ունի: Այդ առաքելությունն իրագործելու համար նույն հոդվածի երկրորդ մասը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»[1]:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակը կրոնական բազմակարծության համատեքստում կանխորոշում է վերջինիս և այլ կրոնական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

Նախ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է կրոնական ազատությունը երաշխավորող մի շարք միջազգային կոնվենցիաների, որոնք ՀՀ իրավական համակարգի անբաժանելի մասն են կազմում: Միաժամանակ Հայաստանը պարտավորություն է ստանձնել համապատասխանեցնել ներպետական օրենսդրությունը միջազգային նորմերի դրույթներին:

1991 թ. Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախաբանում վերահաստատվում է Հայաստանի միջազգային պարտավորությունները՝ ապահովելու մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, այդ թվում բնականաբար նաև խղճի և դավանանքի ազատությունը: Կրոնական բազմակարծության ապահովումը, որպես ժողովրդական պետության բաղադրիչ, առաջին հերթին պետք է իրագործվի պետական եկեղեցու և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների իրավական արդյունավետ կարգավորմամբ, հետևաբար, պետությունը պետք է հավասարակշռի ազգային եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակի պահպանումը և կրոնական

[1] ***Դանիելյան Գ.,*** *Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում: «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2017 № 3 (24): Երևան, ԵՊՀ, 2017, էջ 32:*

բազմակարծության պաշտպանությունը՝ ապահովելով, որ բոլոր կազմակերպություններն ազատորեն իրականացնեն իրենց գործունեությունը առանց խտրականության կամ սահմանափակման: Մինչդեռ որոշակի հակասություն է առաջացնում նույն օրենքի նախաբանում ամրագրված դրույթն առ այն, որ ճանաչվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցու, հոգևոր կյանքի շինության ու ազգային պահպանման կարևոր պատվար լինելու հանգամանքը[1]:

Սակայն Վենետիկի հանձնաժողովը ներկայացրած եզրակացություն-զեկույցում քննարկվող օրենքի առնչությամբ նշել է հետևյալը. «... երկրում, որտեղ ազգային ծագման և որոշակի եկեղեցու պատկանելության միջև առկա է հստակ կապ, ինչպես, օրինակ, Հայաստանում, որտեղ բնակչության շուրջ 98%-ը հայ է, իսկ քաղաքացիների մոտ 90%-ը անվանականորեն անդամակցում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, կարող է առաջանալ այլ կրոնների հանդեպ խտրականության վտանգ: Նման հավանականությունը կանխելու համար անհրաժեշտ է ապահովել և պաշտպանել կրոնական բազմակարծությունը, որը ժողովրդավարության հիմնարար բաղադրիչներից է[2]:

Պետք է իրատեսական մոտեցում ունենալ այս հարցում և ընդունել, որ հասարակության մեջ չի կարող չլինել համոզմունքների վերաբերյալ բազմակարծություն, հետևաբար պետության պարտականությունն է կրոնական և այլ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության դրսևորումներից պաշտպանվելու պատշաճ իրավական երաշխիքներ սահմանել:

Ժողովրդավարական հասարակությունների սահմանադրություններում և մարդու իրավունքների միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերում, անշուշտ, ամրագրված են ազատ դավանանքի և խղճի ու համոզմունքի նկատմամբ հարգանքի երաշխիքներ: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են մի շարք կոնվենցիաներ, որոնք ամրագրում են յուրաքանչյուրի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, ինչպես նաև սահմանում են կրոնական կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացումը: Մասնավորապես՝ 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածն ամրագրում է հետևյալը. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները՝ մենակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակավ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն»: Նույնաբովանդակ նորմեր են սահմանվում 1950

[1] *«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 17.06.1991 թ., ուժի մեջ է մտել՝ 06.07.1991 թ., Հ.Ն-0333-1:*

[2] *Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների վերաբերյալ, Կարծիք հմ. 530/2009, էջ 11:*

թվականի նոյեմբերի 4-ին ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով, 1966 թվականին ընդունված՝ Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածով (պարունակում է ավելի լայն ձևակերպում՝ ներառելով նաև կրթությունը):

Օրինակները շատ են և յուրաքանչյուրը, թերևս, մի փոքր տարբեր շեշտադրմամբ ամրագրում է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, որը ներառում է նաև կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը:

Հարկ ենք համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով անդրադարձել է կրոնի ազատությանը: Մասնավորապես՝ *«Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի»* գործով, որը վերաբերում է Հունաստանի կողմից կրոնական քարոզչության համար անձի դատապարտմանը, դատարանը, արտահայտելով իր իրավական դիրքորոշումը, նշել, է որ «մտքի, խղճի և կրոնի ազատությունը «ժողովրդավարական հասարակության» հիմքերից մեկն է: …Այն ամենակարևոր տարրերից մեկն է, որը կազմում է հավատացյալների ինքնությունը և կյանքի մասին նրանց պատկերացումը: Ժողովրդավարական հասարակությունից անբաժանելի է բազմակարծությունը, որը թանկ գնով նվաճվել է դարերի ընթացքում: … Միջազգային նորմերով սահմանվում է ոչ միայն որևէ կրոն կամ համոզմունք ունենալու ներքին ազատությունը այլ նաև այդ **հավատքը արտաքին ձևով արտահայտելու իրավունքը,** ինչը ներառում է նաև ուսուցումը, քարոզչությունը և այլ անձանց համոզելու փորձերը»[1]:

«Իզզեթթին Դողանը և մյուսներն ընդդեմ Թուրքիայի» գործը վերաբերում է Թուրքիայի կողմից ալևիական համայնքի նկատմամբ կրոնական անհավասար վերաբերմունքին: Դիմողները նշել են, որ պետությունը ինստիտուցիոնալ կերպով աջակցում է սուննի իսլամին, մինչդեռ ալևիական հավատքը չի ճանաչվում և զրկված է պետական պաշտպանությունից և ֆինանսավորումից: Դատարանը սույն գործով նշել է, որ պետության խնդիրը չէ որոշել՝ որ հավատքն է «ճշմարիտ» կամ «ավանդական», այլ՝ ապահովել բոլոր կրոնական և ոչ ավանդական համոզմունքների հավասար իրավական պաշտպանությունը, հետևաբար պետությունը պարտավոր է նույնպիսի հարգանք և պաշտպանություն ցուցաբերել ոչ ավանդական կամ փոքրամասնություն կազմող կրոնական ուղղությունների նկատմամբ: Կրոնի ազատությունը ոչ միայն ներքին համոզմունք է, այլև **արտաքին դրսևորում**: Դատարանը հիմնարար դիրքորոշում է արտահայտել, ըստ որի պետությունը պարտավոր է կրոնական հարցերում պահպանել չեզոքություն և անաչառություն և չի կարող գնահատել կամ դասակարգել կրոնական համոզմունքների արժանիքը կամ աստվածաբանական ճշգրտությունը: Դատարանը նաև շեշտել է, որ եթե պետությունն ընտրում է ներգրավվել կրոնական կյանքի կազմակերպման և ֆինանսավորման մեջ, ապա վերջինս պարտավոր է դա անել ոչ խտրական կերպով և ապահովել հավասար

[1] *Kokkinakis v. Greec (application no. 14307/88) հղումը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57827%22]}*

հնարավորություններ տարբեր կրոնական համայնքների համար կամ ձեռնպահ մնալ նման միջամտությունից[1]:

Այսպիսով, բազմակարծությունը, հանդուրժողականությունն ու լայնախոհությունը «ժողովրդավարական հասարակության» դրոշմն են: Թեև անհատական շահերը երբեմն պետք է ստորադասվեն խմբային շահերին, սակայն ժողովրդավարությունը չի ենթադրում, թե միշտ պետք է առավելություն տրվի մեծամասնության շահերին. անհրաժեշտ է հասնել այնպիսի հավասարակշռության, որը կապահովի փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ արդարացի ու պատշաճ վերաբերմունք:

ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի խղճի և դավանանքի ազատություն: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը: Խղճի ազատությունը կարգավորվում է նաև ՀՀ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով, որը սահմանում է կրոնական կազմակերպությունների գործունեության կարգը, նրանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև դավանանքի ազատության իրացման սահմանափակումները:

Այն, որ Սահմանադրությամբ ճանաչվում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը, պետության և Եկեղեցու հետ հարաբերություններում վերապահվեց նախապատվություն և հաստատվեց առանձնահատուկ հարաբերություններ, ինչը սակայն չի նշանակում, որ Հայ Առաքելական Եկեղեցուն վերապահվեց հանրային-իրավական կարգավիճակ. ...: Ինչպես Հայ Առաքելական Եկեղեցու, այնպես էլ այլ կրոնական կազմակերպությունների մասնավոր-իրավական կարգավիճակը սահմանելիս պետությունը կրոնին և եկեղեցուն վերապահել է ոչ թե *պետականաքաղաքական, այլ սոցիալ-մշակութային գործառույթ*[2]:

Անդրադառնալով «ազգային եկեղեցի» եզրույթի կիրառության հիմնահարցերին՝ համաձայնվում ենք այն իրավական դիրքորոշման հետ, որ քննարկվող տերմինը միջազգային փորձում լայն տարածում չի ստացել և շատ դեպքերում անծանոթ է միջազգային փորձին: Միջազգային փորձում առավել ընդունված է կրոնական գործունեություն իրականացնող կառույցներին վերաբերող այլ ձևակերպումների օգտագործումը, օրինակ՝ «պետական եկեղեցի» (established church), «ավանդական եկեղեցի» (traditional church), երբեմն՝ «պաշտոնապես ճանաչված եկեղեցի» (officially recognized church) կամ «պետության կողմից աջակցվող եկեղեցի» (state-supported church): Այս տերմինները նախընտրելի են

---

[1] *Izzettin Doğan and Others v. Turkey (Application no. 62649/10) հղումը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-162697%22]}*

[2] ***Հակոբյան Կ.**, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու իրավական կարգավիճակը և նրա դերը քաղաքացիական հասարակության բարոյական հիմքերի ձևավորման գործում: Արդարադատություն 2011 2(13) էջ 23:*

հատկապես այն իրավական համակարգերում, որտեղ կրոնական ազատության և հավասարության սկզբունքները համադրվում են պատմամշակութային ժառանգության ճանաչման հետ:

Հարկ է նշել, որ ո՛չ սահմանադրական, ո՛չ օրենսդրական մակարդակում չի տրվել «ազգային եկեղեցի» հասկացության բնորոշումը, ինչը բնականաբար առաջացնում է տարընկալումներ և բովանդակության ընկալման բարդություններ: Ենթադրվում է, որ եզրույթի իրավական մեկնաբանման բացակայությունը պայմանավորված է խղճի ազատության արտահայտման անհարկի խոչընդոտման վտանգով: Միևնույն ժամանակ պետք է ընդունել, որ իրավական անորոշությունը, որը ծագում է քննարկվող եզրույթի առնչությամբ, իր հետ բերում է մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես խղճի և դավանանքի ազատության իրականացման առնչությամբ:

Օրինակ այն, որ հայաստանյան ՁԼՄ-ներում շատ կրոնական կազմակերպություններ բնորոշվում են որպես «հակազգային», որի պատճառով նսեմացվում է նրանց անդամների արժանապատվությունը: Նման չսահմանված եզրերը ոչ միայն չեն կարգավորում կրոնական ոլորտի իրավահարաբերությունները, այլև հակառակը՝ ծնում են նոր խնդիրներ[1]:

Ընդ որում ՄԻԵԴ դատական պրակտիկայում անդրադառնալով պետական եկեղեցու իրավական կարգավիճակի իրավաչափությանը՝ նշվել է, որ պետական եկեղեցական համակարգը չի կարող ինքնին համարվել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում, միևնույն ժամանակ պետական եկեղեցական համակարգը, 9-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար, պետք է ներառի **անհատի կրոնի ազատության հատուկ երաշխիքներ**[2]:

Պատմական իրադարձությունների ընթացքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հայ ժողովրդի համար եղել է ոչ միայն հոգևոր և կրոնական կենտրոն, այլև ազգային ինքնության պահպանման կարևոր գործոն: Եկեղեցին նպաստել է հայկական ավանդույթների և սովորույթների պահպանմանը՝ դրանք փոխանցելով սերնդեսերունդ:

Պետականության բացակայության ժամանակաշրջաններում այն ստանձնել է կրթության կազմակերպման դերը՝ ապահովելով գիտելիքի տարածումը: Բացի այդ, եկեղեցին ակտիվորեն մասնակցել է ազգային-ազատագրական շարժումներին՝ նպաստելով հայ ժողովրդի անկախության և ազատության համար մղվող պայքարին:

Պետականության բացակայության ժամանակաշրջաններում Եկեղեցին ստանձնել է պետական կառավարման երեք հիմնական ճյուղերի՝ օրենսդրական, գործադիր և դատական գործառույթների իրականացման բարդ ու պատասխանատու պարտականությունները:

---

[1] ***Դանիելյան Ս.***, *Նկատառումներ Հայաստանում «Խղճի ազատության մասին» օրինագծի վերաբերյալ. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը: 2019, էջ 20:*

[2] ***Evans, C., Thomas, C.A.*** *Church-State Relations in the European Court of Human Rights. Volume 2006, Issue 3, էջ 700:*

Այլ կերպ ասած՝ Հայ առաքելական եկեղեցին դարեր շարունակ գլխավորել է ազգային-ազատագրական պայքարը, իսկ պետականության բացակայության ժամանակ՝ իրականացրել «պետության գործառույթ», այս ամենից բացի՝ ստանձնել է ազգային ինքնության, ավանդույթների, սովորույթների, բարոյական արժեհամակարգի և մշակույթի, սովորութային իրավունքների պահպանման առաքելությունը[1]:

Այսպիսով, արված ուսումնասիրության հիման վրա հանգում ենք նրան, որ ազգային եկեղեցու ճանաչումը չի հակասում կրոնական ազատությանը, եթե ապահովված են խտրականության բացառման և հավասարության երաշխիքները:

Ինչ վերաբերում է եկեղեցու և պետության փոխհարաբերություններին, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ հստակ ամրագրված են այն սահմանները, որոնցում պետք է գործեն ազգային եկեղեցին և պետությունը:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված է. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածը երաշխավորում է նաև Առաքելական Եկեղեցու՝ **իր կանոնադրության համաձայն գործունեության ազատությունը**: Նույն օրենքի 17-րդ հոդվածի (բ) ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության եկեղեցին անջատված է պետությունից: Սույն հիմնադրույթի համաձայն պետությունը՝ չի միջամտում եկեղեցու և կրոնական կազմակերպությունների՝ **օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին,** արգելում է եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որևէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն:

Հետևաբար, համաձայն քննարկված նորմի՝ պետությունը և պետական պաշտոնյաները իրավունք չունեն որևէ կերպ միջամտելու Եկեղեցու ներքին կյանքին: Ավելին՝ «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու **ինքնակառավարումն** իր նվիրապետության սահմաններում»:

Միևնույն ժամանակ նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ պետությունը չի կարող միջամտել եկեղեցու ներքին գործերին, քանի որ **եկեղեցին ինքնակառավարվող կառույց է** և գործերին միջամտելը հակասահմանադրական է և չի բխում իրավական պետության հիմնարար երաշխիքներից, որոնք ապահովում են խղճի ազատությունը և կրոնական բազմակարծությունը:

[1] ***Սերոբյան Պ.,*** *Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը: Քրիստոնեություն և իրավունք, միջազգային խորհրդաժողովի նյութերի ժողովածու: Երևան, 2001, էջ 131:*

Ներկայումս պետության և եկեղեցու տարանջատման սկզբունքը երկկողմանի է. ինչպես պետությունը չի կարող միջամտել եկեղեցու ներքին գործերին, այնպես էլ եկեղեցին չի կարող միջամտել պետական կառավարման գործընթացներին: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի գ) կետով հստակ ամրագրված է, որ եկեղեցին չի կարող իրականացնել պետական կառավարում կամ ստանձնել պետական մարմնի գործառույթներ: Պետական մարմնի գործառույթների ստանձնման փորձերը եկեղեցու կողմից, կամ եկեղեցական կյանքի նկատմամբ պետության անհիմն միջամտությունը կարող են դիտվել որպես պետության աշխարհիկության սկզբունքի խախտում:

Անշուշտ եկեղեցու և պետության փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական ոլորտն ապահովված է այն իրավական երաշխիքներով, որոնց համաձայն եկեղեցին, որպես ինքնակառավարվող կառույց պետք է զերծ մնա արտաքին միջամտություններից և գործի իր կանոնադրության համաձայն, սակայն, ցավալիորեն պետք է արձանագրենք, որ գործնականում հաճախ են պետական մարմինների և պաշտոնատար անձանց, մասնավորապես ՀՀ վարչապետի կողմից փորձ արվում միջամտել Եկեղեցու ներքին գործերին, մասնավորապես Եկեղեցու բարձրագույն առաջնորդի ընտրության առումով[1]:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մի շարք նախադեպերով, մասնավորապես՝ *«Հասանն ու Չաուշն ընդդեմ Բուլղարիայի» (Hasan and Chaush v. Bulgaria) և «Բեսարաբիայի մետրոպոլիտ եկեղեցին և այլք ընդդեմ Մոլդովայի» (Metropolitan Church of Bessarabia and Others v. Moldova)* գործերով, Դատարանը միանշանակ մատնանշում է, որ պետությունը պարտավոր է խստիվ պահպանել չեզոքությունը և չի կարող կառավարել կամ վերահսկել, թե ով պետք է լինի որևէ եկեղեցու առաջնորդը: Նման միջամտությունները ոչ միայն իրավական առումով են անթույլատրելի, այլև խարխլում են հասարակության բազմակարծությունն ու խաղաղ համակեցությունը:

Դատարանը նշել է, որ պետական իշխանությունները պարտավոր են մնալ չեզոք իրենց լիազորությունների իրականացման հարցում, երբ խոսքը վերաբերում է կրոնական համայնքների ներքին կազմակերպմանը: Կրոնական համայնքների ինքնավար գոյությունը անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության բազմակարծության համար:

Դատարանը նշված գործերով նշել է, որ եթե պետությունը նախապատվություն է տալիս կրոնական համայնքի առաջնորդներից մեկին կամ փորձում է համայնքին ստիպել միավորվել մեկ ընդհանուր առաջնորդության ներքո՝ հակառակ նրանց կամքի, դա դիտարկվում է որպես միջամտություն կրոնի ազատությանը: Դատարանը վերահաստատել է, որ կրոնական համայնքներն ունեն ինքնավարության իրավունք պետությունից: Սա նշանակում է, որ

[1] https://news.am/arm/news/894989.html
https://168.am/2025/10/29/2303382.html
https://news.am/arm/news/886924.html

կրոնական խումբն ինքն է որոշում իր կազմակերպչական կառուցվածքը և հոգևոր առաջնորդին:

Դատարանն արձանագրել է, որ պետությունը չպետք է միջամտի կրոնական առաջնորդների ընտրությանը կամ փոխարինմանը, քանի որ դրանով խախտում է կրոնական համայնքի կազմակերպչական ինքնավարությունը և անհատների դավանանքի ազատությունը[1]:

Այսպիսով, պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Եկեղեցու ներքին գործերին միջամտելը հակասում է ոչ միայն ազգային սահմանադրական նորմերին, այլ նաև մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին:

Արված ուսումնասիրության հիման վրա հանգում ենք նրան, որ.

1. Ազգային եկեղեցու ճանաչումը չի հակասում կրոնական ազատությանը, եթե ապահովված են խտրականության բացառման և հավասարության երաշխիքները, սակայն միջդավանական հակասությունների սրմանը դիմակայելու, տարբեր կրոնական խմբերի ներկայացուցիչների խաղաղ համակեցությունը ապահովելու համար անհրաժեշտ է արդյունավետ քաղաքական և իրավական մեխանիզմների մշակում, մասնավորապես՝

ա/ իրավական որոշակիության տեսանկյունից անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել «ազգային եկեղեցի» եզրույթի սահմանումը: Ընդ որում՝ ազգային եկեղեցու կարգավիճակի իրավական ընկալումը պետք է հիմնված լինի ազգային ինքնության, ազգապահպանման ու հոգևոր կյանքի շինության, մշակութային և իրավաքաղաքական ընկալման վրա:

բ/ վերանայել կրթական և տեղեկատվական ոլորտի պետական քաղաքականությունը՝ ձևավորելու հանդուրժողականության մշակույթ և վերացնելու հասարակական կարծրատիպերը:

գ/ Եկեղեցու և հասարակության միջև երկխոսության ձևավորում, որը թույլ կտա պահպանել Հայ Առաքելական Եկեղեցու ազգային-մշակութային առաքելությունը՝ միաժամանակ հարգելով ու պաշտպանելով այլ կրոնական համայնքների իրավունքները:

2. Եկեղեցու և պետություն փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերով եկեղեցին ինքնակառավարվող կառույց է և պետք է զերծ մնա արտաքին միջամտություններից: Ուստի պետության աշխարհիկության սկզբունքն ապահովելու համար անհրաժեշտ է իրավական պատաս-խանատվություն սահմանել պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Եկեղեցու ներքին գործերին միջամտելու համար:

[1] *Hasan and Chaush, Holy Synod of BOC v. Bulgaria, Application no. 30985/96, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58921*

Metropolitan Church of Bessarabia v. Moldova, Application no. 45701/99, https://hudoc.echr.coe.int/eng?i=002-5486

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. 1995 թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2005 և 2015 թթ. փոփոխություններով):
2. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է՝ 17.06.1991 թ., ուժի մեջ է մտել՝ 06.07.1991 թ., Հ.Ն-0333-1:
3. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է՝ 22.02.2007 թ.:
4. Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների վերաբերյալ: Կարծիք հմ. 530/2009:
5. **Հարությունյան Գ., Վաղարշյան Ա.,** ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ: Եր., «Իրավունք», 2010:
6. **Ղամբարյան Ա., Շաքարյան Թ.,** Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սահմանադրական կարգավիճակի բարեփոխումների դոկտրինալ հայեցակարգ: Եր., 2020:
7. **Դանիելյան Գ.,** Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում: «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2017 № 3 (24) ԵՊՀ Երևան 2017:
8. **Հակոբյան Կ.,** «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու իրավական կարգավիճակը և նրա դերը քաղաքացիական հասարակության բարոյական հիմքերի ձևավորման գործում», Արդարադատություն 2011 2(13):
9. **Դանիելյան Ս.,** «Նկատառումներ Հայաստանում «Խղճի ազատության մասին» օրինագծի վերաբերյալ. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը: 2019:
10. **Evans C., Thomas C.A.** Church-State Relations in the European Court of Human Rights. Volume 2006, Issue 3:
11. *Kokkinakis v. Greec* (application no. 14307/88), հղումը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57827%22]}
12. *Izzettin Doğan and Others v. Turkey* (Application no. 62649/10), հղումը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-162697%22]}
13. *Eweida and Others v. the United Kingdom* (Applications nos. 48420/10, 59842/10, 51671/10 and 36516/10), հղումը՝ https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-115881%22]}
14. *Hasan and Chaush, Holy Synod of BOC v. Bulgaria,* (Application no. 30985/96), հղումը՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58921,
15. *Metropolitan Church of Bessarabia v. Moldova,* (Application no. 45701/99), հղումը՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=002-5486

ПРАВОВОЙ СТАТУС АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ СВЯТОЙ ЦЕРКВИ В КОНТЕКСТЕ РЕЛИГИОЗНОГО ПЛЮРАЛИЗМА

Аннотация

В статье рассматривается правовой статус Армянской Апостольской Святой Церкви в контексте религиозного плюрализма. Анализируется конституционное закрепление роли Церкви, а также правовое значение понятия "национальная церковь".

На основе изучения международного опыта и судебной практики Европейского суда по правам человека делается вывод о том, что признание "национальной церкви" не противоречит свободе вероисповедания при условии обеспечения гарантий недискриминации и равенства.

В то же время, с точки зрения правовой определённости, предлагается законодательно закрепить определение понятия "национальная церковь".

Учитывая тот факт, что на практике нередко имеют место случаи вмешательства государственных органов и должностных лиц во внутренние дела Церкви, предлагается установить юридическую ответственность за подобные действия в целях обеспечения принципа светскости государства.

Ключевые слова: Армянская Апостольская Святая Церковь, "национальная церковь", свобода вероисповедания, исключительная миссия, религиозный плюрализм.

THE LEGAL STATUS OF THE ARMENIAN APOSTOLIC HOLY CHURCH IN THE CONTEXT OF RELIGIOUS PLURALISM

Annotation

The article discusses the legal status of the Armenian Apostolic Holy Church in the context of religious pluralism. It analyzes the constitutional recognition of the Church's role, as well as the legal significance of the term “national church.”

Based on the study of international experience and the case law of the European Court of Human Rights, it is concluded that the recognition of a national church does not contradict freedom of religion, provided that guarantees of non-discrimination and equality are ensured.

At the same time, from the perspective of legal certainty, it is proposed to legally define the concept of “national church.”

Considering that, in practice, cases of interference by state bodies and officials in the internal affairs of the Church occur rather frequently, it is proposed to establish legal liability for such actions in order to ensure the principle of state secularism.

Keywords: Armenian Apostolic Holy Church, national church, freedom of religion, exclusive mission, religious pluralism.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 02.10.2025 թ., տրվել է գրախոսության 05.10.2025 թ., ընդունվել է տպագրության 25.10.2025 թ.: